



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք

12 ապրիլ 2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էր՝ Աստղիկ Բաբայանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Լուսինե Մարտիրոսյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ Հայկանուշ Ավագյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Գևորգ Սաքանյանը, օգնական՝ Գառնիկ Խաչատրյանը, «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի տնօրեն Արթուր Հայրապետյանը, համայնքի բնակիչ Հրաչյա Վարդանյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի
ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ **ավագանին**
ո ր ո շ ե ց .

